ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Ա Ր Մ Ա Վ Ի Ր Ի Մ Ա Ր Զ Պ Ե Տ

« -----» « ----------» 2022թ. **N ----------**

«ՀԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ» ՀԿ-Ի
«ՀԵՏՔ» ԹԵՐԹԻ ԼՐԱԳՐՈՂ
ԳՐԻՇԱ ԲԱԼԱՍԱՆՅԱՆԻՆ
ք.Երևան, Փ. Բուզանդի 1/3, 8-րդ հարկ
Հեռ. 093-82-26-80, e-mail: grisha.balasanyan@hetq.am

Հարգելի պարոն Բալասանյան,

Ի պատասխան ՀՀ Արմավիրի մարզպետարան հասցեագրված Ձեր 24.08.2022թ-ի հարցմանը՝ ներկայացնում եմ ՀՀ Արմավիրի մարզում առկա աղբավայրերի վերաբերյալ հետևյալ տեղեկատվությունը.

Հարց 1. ՀՀ Արմավիրի մարզում առկա օրինական աղբավայրերից են Վաղարշապատ համայնքի աղբավայրը, որը գտնվում է Շահումյան բնակավայրում, զբաղեցրած տարածքը 7 հա է, ինչպես նաև Խոյ համայնքի Աղավնատուն բնակավայրում 0.999 հա, Արմավիր համայնքում 6հա, և Մեծամոր քաղաքում 2հա, իսկ մարզի համայնքների բնակավայրերում առկա են ավագանու կողմից հաստատված ժամանակավոր 41 բացվող և փակվող հիմնական աղբավայրեր:

Հարց 2. Աղբավայրերի տարածքները ցանկապատված չեն, սակայն իրենց ռելիեֆով հարմար է նման նպատակներով /աղբահանության/ շահագործելու համար: Աղբավայրերում կուտակված աղբը շաբաթական 2 անգամ հրվում է հորանցք, այն ծածկվում է հողով՝ պահպանելով բնապահպանական նորմերի նվազագույն անվտանգության կանոնները:

Հարց3. Չցանկապատված աղբավայրերի մոտակայքում գտնվող հողատարածքների սեփականատերերի կողմից հողատարածք աղբի ներթափանցման պատճառով չմշակելու համար ՀՀ Արմավիրի մարզպետարան բողոքներ չեն ներկայացվել:

Հարց 4. 2017-2022թթ. ընթացքում մարզում փակվել է 125 աղբավայր:

Հարց 5. 2017-2022թթ. ընթացքում մարզի տարածքում նոր աղբավայրեր չեն գոյացել:

Հարց 6.Հանրապետական և միջպետական ավտոճանապարհների սպասարկումը իրականցվում է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության «Ճանապարհային դեպարտամենտ»-ի հետ կնքած պայմանագրով, իսկ մարզային նշանակության ավտոճանապարհների երկայնքով ձգվող աղբը մաքրվում է ճանապարհը սպասարկող կազմակերպությունների և համայնքների կողմից:Մարզպետարանը շարունակաբար հետևողական է մարզի համայնքներում աղբահանությունը ժամանակին և պատշաճ կատարելու ուղղությամբ:

Հարց 7. Դեռևս 2014թ. ՀՀ Արմավիրի մարզպետի գլխավորած պատվիրակության Չեխիայի Հանրապետությունում աշխատանքային այցով գտնվելու ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել ՀՀ Արմավիրի մարզում աղբի վերամշակման գործարան հիմնելու ուղղությամբ: 13.03.2018թ. մարզպետարանում հրավիրված խորհրդակցությանը չեխական «Էլեկտրամոնտաժ Սիկորա» ընկերությունը ներկայացրել է Արմավիր քաղաքում կառուցվող աղբի վերամշակման գործարանի ծրագիրը, որը կյանքի պետք է կոչվեր ՀՀ Արմավիրի մարզպետարանի և ՉՀ Մորավյան-Սիլեզյան երկրամասի միջև 2014 թվականին ստորագրված փոխըմբռնման հուշագրի շրջանակներում: Աղբի վերամշակման գործարանի կառուցման համար նախնական տվյալներով նախատեսվում էր ներդնել 100 մլն եվրո, իսկ ծրագրի իրականացման ողջ գործընթացում ներգրավված էր լինելու տեղի աշխատուժը, չեխական կողմն էլ իրականացնելու էր մասնագիտական և ընթացիկ վերահսկողությունը: Չեխիայից ժամանած մասնագիտական խումբը նաև ուսումնասիրություններ էր իրականացրել Արմավիրի աղբավայրում, որից հետո ներկայացվելու էր գործարանի կառուցման ծրագրի վերջնական հայեցակարգը և ժամանակահատվածը:

ՀՀ Արմավիրի մարզի 2017-2025թթ. զարգացման ռազմավարության իրականացման 2018 թվականի գործունեության ծրագրում պլանավորվել էր աղբի գործարանի կառուցման աշխատանքները, սակայն ծրագիրը չի իրականացվել ֆինանսավորման բացակայության պատճառով, որի մասին նշվել է մարզի 2018 թվականի գործունեության ծրագրի տարեկան մշտադիտարկման հաշվետվությունում:

Առդիր՝ էլեկտրոնային նյութ:

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 30.08.2022 13:56:34 GMT+4

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Подписано: HOVHANNISYAN EDVARD 2001830505

ԷԴՎԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

0901 ք. Արմավիր, Աբովյան -71, Հեռ.՝ 0237/2-37-16, Ֆաքս 010/28-06-46, էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am

Քաղաքաշինության վարչության պետ Աշոտ Հովհաննիսյան
Կատարող՝ քաղաքաշինության վարչություն
Ռաֆիկ Սահակյան
Հեռ. / 0237/ 21377